ՊԱՏԺԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ԱՐՏԱՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արա ՖԻԴԱՆՅԱՆ
Ինտերպոլի հայաստանյան ներկայացուցչության կենտրոնական գրասենյակի ղեկավար

Արտահանձնման ենթակա են միայն այն անձինք, ովքեր մեղադրվում են որևէ հանցագործություն և ոչ թե ցանկացած տեսակի իրավախախտում կատարելու մեջ: Հետևաբար, արտահանձնման համար հիմք է այդ անձի նկատմամբ հարուցված քրեական գործը կամ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը[1]:

Սակայն միայն քրեական գործի կամ ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը բավարար չէ արտահանձնում իրականացնելու համար. անհրաժեշտ է որոշակի պարտադիր պայմանների առկայություն, որոնցից են՝

1) այն արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է հայցվող անձը, պետք է հանցագործություն համարվի թե՛ հայցող, թե՛ հայցվող երկրների օրենսդրությամբ (երկակի հանցավորության կանոն),

2) կատարված հանցագործությունն ուղղակիորեն սահմանված է արտահանձնման մասին պայմանագրում կամ համապատասխանում է սահմանված պատասխանատվության ծանրության աստիճանին (պատասխանատվության նվազագույն ժամկետի կանոն),

3) արտահանձնման ենթարկված անձը կարող է քրեական պատասխանատվության, պատժի ենթարկվել կամ փոխանցվել երրորդ երկրին միայն այն հանցագործության համար, որի համար արտահանձնման մասին հայցադիմում է ներկայացվել (հատուկ կանոն):

Պատժի նվազագույն ժամկետի կանոնի համաձայն՝ անձը ենթակա է արտահանձնման միայն այնպիսի հանցագործությունների կատարման համար, որոնք հատուկ սահմանված են արտահանձնման մասին պայմանագրով կամ այդ հանցագործության սանկցիան համապատասխանում է սահմանված նվազագույն պատժաչափի սանդղակին: Այսինքն՝ կատարվել է այնպիսի հանցագործություն, որի կատարման մեջ մեղադրվող անձը ենթակա է արտահանձնման: Այն տեսական գրականության մեջ հաճախ կոչվում է «էքստրադիցիոն հանցագործություն»:

Արտահանձնման պայմանագրեր կնքելիս գործնականում կիրառվում են էքստրադիցիոն հանցագործության սահմանման հետևյալ տեսակները՝

1) սահմանվում է այն բոլոր հանցագործությունների ցանկը, որոնց կատարման դեպքում անձը ենթակա է արտահանձնման,

2) սահմանվում է հանցագործությունների նվազագույն պատժաչափը,

3) կիրառվում է հանցագործությունների ցանկի և նվազագույն պատժաչափի չափորոշիչների համակցում:

---

[1] Տե՛ս, օրինակ՝ Бойцов А. И. Выдача преступников, СПб.: Юридический центр Пресс, 2004, էջ 400:

Արտահանձնման պայմանագրերի կնքման վաղ շրջանում՝ 19-րդ դարում, ընդունված է եղել արտահանձնման ենթակա բոլոր հանցատեսակների ամրագրումը պայմանագրերում և ազգային օրենսդրություններում: Այդպիսին էր, օրինակ, 1883 թ. Բելգիայի, 1892 թ. Շվեյցարիայի, 1870 թ. Մեծ Բրիտանիայի օրենքները: Սկզբնական շրջանում այդ ցուցակներում ընդամենը մի քանի հանցատեսակ էր սահմանված, սակայն հետզհետե այն ընդլայնվեց:

Օրինակ՝ եթե 1798 թվականին Ֆրանսիայի և Շվեյցարիայի միջև կնքված կոնվենցիայի համաձայն՝ արտահանձնում կարող էր իրականացվել միայն սպանություն, գողություն և քաղաքական հանցագործություններ կատարելու համար, ապա 1803 թվականի փոփոխված տարբերակի համաձայն՝ արտահանձնում կարող էր իրականացվել սպանության, թունավորման, հրկիզման, դրամանենգության և գողության համար[2]:

Էքստրադիցիոն հանցատեսակների քանակի աճով պայմանավորված՝ այդ ցուցակը բավականին ընդլայնվել էր և բարդություններ էր առաջացնում: Ուստի էքստրադիցիոն հանցատեսակների թվարկմանը փոխարինելու եկավ կատարված հանցագործության համար նվազագույն պատժաչափի սահմանումը, համաձայն որի՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում են արտահանձնել ցանկացած հանցագործության դեպքում (որոշակի բացառություններով), որոնց համար սահմանված է ազատազրկում ոչ պակաս նախատեսված որոշակի ժամկետից: Այդ նվազագույն ժամկետը հիմնականում մեկ տարին է, որը պետք է նախատեսված լինի թե՛ հայցող և թե՛ հայցվող երկրների օրենսդրություններով:

Ներկայումս այդ չափորոշիչով են առաջնորդվում միջազգային կոնվենցիաներ և երկկողմ պայմանագրեր կնքելիս:

Օրինակ՝ Եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ի 1-ին մասի համաձայն. «Հանձնումը պետք է կատարվի այնպիսի հանցագործությունների դեպքում, որոնք հայցվող և հայցող կողմերի օրենքներով պատժվում են ազատազրկմամբ կամ կալանքով նվազագույնը մեկ տարի ժամկետով կամ ավելի խիստ պատժով»:

Այս մոտեցումն է ընկած Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի (հոդված 2-ի 1-ին մաս), ինչպես նաև Միացյալ Արաբական Էմիրությունների (հոդված 2-ի 1-ին մասի «ա» կետ) միջև կնքված երկկողմ պայմանագրերում:

Պայմանագրային պրակտիկայում առկա են այս հարցի վերաբերյալ այլ մոտեցումներ ևս: Դրանցից է համակցված տարբերակի կիրառումը:

Այսպես՝ 1961 թվականին ԱՄՆ-ի և Շվեդիայի միջև կնքված Արտահանձնման մասին պայմանագրով նախատեսված է էքստրադիցիոն հանցագործությունների 23 տեսակ՝ միաժամանակ նշելով, որ այն պետությունը, որին հասցեագրված է արտահանձնման մասին հայցադիմումը, պետք է հանձնի հայցվող անձին թվարկված ցանկացած հանցագործության համար միայն այն դեպքում, երբ պայմանավորվող կողմերի օրենսդրություններով այդ հանցագործության համար սահմանված է ազատազրկում մեկ տարուց ավելի ժամկետով:

Հնարավոր է պահանջվի այնպիսի անձի արտահանձնում, որի կողմից կատարվել են մի քանի հանցագործություններ, որոնցից ոչ բոլորի նվազագույն պատժաչափն է համապատասխանում սահմանված չափորոշիչին: Այս պարագայում կիրառելի է երկու տարբերակ՝ արտահանձնում իրականացվում է միայն այն հանցագործության համար,

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 453:

որը համապատասխանում է սահմանված չափորոշիչներին, կամ արտահանձնումն իրականացվում է բոլոր հանցագործությունների համար:

Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիայով «եթե հանձնման վերաբերյալ հարցումը ներառում է մի քանի առանձին հանցագործություններ, որոնցից յուրաքանչյուրը հայցող և հայցվող կողմերի օրենքներով պատժելի են ազատազրկման կամ կալանքով, բայց դրանցից մի քանիսը չեն համապատասխանում պատժի ժամկետի վերաբերյալ պայմանին, հայցվող կողմն իրավունք ունի հանձնում իրականացնել նաև մնացած հանցագործությունների համար» (հոդված 2-ի 2-րդ մաս): Հայաստանի Հանրապետության և Միացյալ Արաբական Էմիրությունների միջև կնքված արտահանձնման մասին պայմանագրի համաձայն էլ նվազագույն պատժաչափի պայմանին կատարված հանցագործություններից նույնիսկ միայն մեկի համապատասխանելիության դեպքում արտահանձնումն իրականացվում է: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև արտահանձնման մասին պայմանագրի հոդված 2-ի 3-րդ մասով նման պարագայում արտահանձնումը թույլատրվում է միայն այն հանցագործությունների համար, որոնք համապատասխանում են սահմանված նվազագույն պատժաչափին: Կարծում ենք, որ ԱՄԷ-ի հետ կնքված պայմանագով սահմանված դրույթն առավել ընդունելի է, քանի որ ավելի ծանր հանցագործության համար պատասխանատվություն սահմանելիս նվազ ծանրության հանցագործության համար պատասխանատվությունը չի վատթարացնի հետախուզվողի վիճակը, և միաժամանակ կլուծվի այդ նվազ ծանր հանցագործությունների ընթացքը:

Նվազագույն պատժաչափի վերաբերյալ դրույթ նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, որի հոդված 487-ի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով»:

Արտահանձնման համար նվազագույն պատժաչափը մեկ տարի ազատազրկում սահմանված է մի շարք երկրների օրենսդրություններում ևս, ինչպիսիք են՝ Նիդերլանդները, Հունաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Շվեդիան և այլն: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ մի շարք երկրների օրենսդիրներ հենց նվազագույնը 1 տարի ազատազրկումն են սահմանել որպես նվազ ծանր հանցագործությունների տարանջատումը առավել ծանր հանցագործություններից: Այսպես՝ ԱՄՆ-ի օրենսդրությամբ՝ հանցագործությունները դասակարգվում են որպես վտանգավոր (felony) և նվազ վտանգավոր (misdemeanour): Վերջինիս շարքին են դասվում այն հանցագործությունները, որոնց համար սահմանված է պատիժ ազատազրկման ձևով մինչև 1 տարի ժամկետով կամ տուգանք, իսկ մնացած բոլոր հանցագործությունները դասվում են առաջինի շարքին: Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 12-ի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն են համարվում հակաօրինական գործողությունները, որոնց կատարման համար որպես նվազագույն պատժաչափ նախատեսված է ազատազրկում 1 տարի և ավելի ժամկետով: Միևնույն հոդվածի 2-րդ մասով էլ՝ զանցանք են համարվում հակաօրինական գործողությունները, որոնց կատարման համար որպես նվազագույն պատժաչափ սահմանված է ազատազրկում ավելի կարճ ժամանակով, կամ տուգանք:

Այսպիսով, արտահանձնման համար 1 տարի ազատազրկումը սահմանելով որպես նվազագույն պատժաչափ՝ թույլ է տալիս խուսափել ոչ միայն զանցանք կատարած անձանց արտահանձնումից, այլև նվազ ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց արտահանձնումից[3]: Չնայած այս կերպ փաստացի չի ապահովվում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կիրառումը, այդուհանդերձ նվազ ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձանց արտահանձնումը նպատակահարմար չէ նույնիսկ այն պատճառով, որ արտահանձնումն իրականացնելու համար պետության կողմից ծախսվող գումարը շատ ավելին է, քան տվյալ անձի պատճառած վնասը:

Փաստորեն, արտահանձնման «պատժի նվազագույն ժամկետի» կանոնի հիմքում ձևական առումով ընկած է հանցագործությունների դասակարգման դրույթը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ոչ մեծ ծանրության են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով սահմանված պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 19-ի 2-րդ մաս): Այս մոտեցումը հատուկ է նախկին ԽՍՀՄ երկրների օրենսդրություններին (Բելառուսի քրեական օրենսգրքի հոդված 12-ի 2-րդ մաս, Ուկրաինայի քրեական օրենսգրքի հոդված 12-ի 2-րդ մաս, Ադրբեջանի քրեական օրենսգրքի հոդված 15-ի 2-րդ մաս և այլն):

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը ևս ոչ մեծ ծանրության էր համարում այն արարքը, որի համար նախատեսված էր ազատազրկում մինչև երկու տարի ժամկետով (հոդված 15-ի 2-րդ մաս), սակայն 2011 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված նոր օրենքով այդ ժամկետը երկուսից դարձավ երեք տարի:

Ընդհանուր չափորոշիչների առկայության պարագայում այդ երկրների մասնակցությամբ երկկողմ և բազմակողմ պայմանագրերում կարելի էր նվազագույն պատժաչափ կիրառել երկու տարին: Սակայն, թե՛ Մինսկի կոնվենցիայում (հոդված 56-ի 2-րդ մաս) և թե՛ հետագայում՝ Քիշնևի կոնվենցիայում (հոդված 66-ի 2-րդ մաս) էքստրադիցիոն հանցագործությունների նվազագույն ժամկետ սահմանվեց մեկ տարին: Միայն արտահանձնման մասին Օրինակելի պայմանագրի հոդված 2-ով երկու տարին նախատեսված է որպես այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 64-ը թույլատրում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժի նշանակում: Սակայն հնարավո՞ր է արդյոք այս հոդվածի, ինչպես նաև քրեական օրենսգրքի հոդված 70-ի (պատիժը պայմանականորեն չկիրառելը), հոդված 76-ի (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը), հոդված 77-ի (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը) դրույթների կիրառումը արտահանձնման ենթարկված անձի նկատմամբ՝ հաշվի առնելով պատժի նվազագույն չափի պայմանը:

Կարծում ենք, որ հնարավոր է, քանի որ պատժի նվազագույն պայմանը վերաբերվում է քրեական օրենսգրքով սահմանված և ոչ թե դատարանի կողմից նշանակվող պատժաչափին: Փաստորեն պատժի նվազագույն ժամկետի կանոնի նպատակը ոչ թե պատժաչափ սահմանելն է, այլ հանցավոր արարքի վտանգավորության աստիճան որոշելը:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 458:

Դատապարտյալների փոխանցման մասին 1983 թվականի մարտի 21-ի Կոնվենցիայի հոդված 10-ի համաձայն՝ պատժի հետագա կրման նպատակով դատապարտյալների փոխանցման դեպքում պատժի «շարունակվող ի կատար ածման դեպքում Կատարող պետությունը կաշկանդված է Դատապարտող պետության կողմից սահմանված պատժի իրավական բնույթով և տևողությամբ»: Հետևաբար, հայցող երկիրը փոխանցված դատապարտյալի վերաբերյալ որևէ դատավարական որոշում կայացնելիս պետք է նկատի ունենա և հաշվի նստի հայցվող երկրի իրավասու մարմինների կողմից կայացրած որոշումների հետ: Սակայն պատժի հետագա կրման համար դատապարտյալների փոխանցումը և հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց ու դատավճիռն ի կատար ածելու նպատակով անձանց արտահանձնումը, ունենալով արտաքին նմանություն, ունեն նաև մի շարք տարբերություններ: Դրանցից մեկն էլ այն է, որ դատապարտյալի փոխանցման պարագայում վերջինիս կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքն ուղղված է հայցվող երկրի շահերին, իսկ հանցագործության կատարման մեջ մեղադրվող կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակով անձի արտահանձնման պարագայում՝ հայցող երկրի շահերին: Հետևաբար, եթե դատապարտյալների փոխանցման դեպքում հայցվող երկիրը շահագրգռված է հայցվող անձի կողմից պատժի հետագա կրումով, ապա արտահանձնման պարագայում հայցվող երկիրը որևէ շահագրգռվածություն չի ցուցաբերում: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ արտահանձնումից հետո հայցող երկիրն անձի նկատմամբ կարող է կիրառել թե՛ ավելի մեղմ պատժի նշանակում, թե՛ պատժի պայմանականորեն չկիրառում, թե՛ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում, թե՛ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում՝ կաշկանդված չլինելով պատժի նվազագույն ժամկետի կանոնով: Այդ իսկ պատճառով միջազգային ոչ մի պայմանագրով կամ կոնվենցիայով վերոհիշյալ դրույթներն արգելող որևէ նորմ սահմանված չէ:

Պատժի նվազագույն ժամկետը կիրառվում է ոչ միայն հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց արտահանձնելիս, այլ նաև դատավճիռն ի կատար ածելու համար անձին արտահանձնելիս:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդված 487-ի 3-րդ մասի համաձայն. «Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման վեց ամսից ոչ պակաս ժամկետով»: Քիշնևի կոնվենցիայի հոդված 66-ի 3-րդ մասով ևս այդ ժամկետը վեց ամիս է, իսկ Եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ով՝ չորս ամիս:

Այսպիսով, պատժի նվազագույն ժամկետի կիրառման կանոնը արտահանձնման պարտադիր պայմաններից մեկն է, որն ամրագրվել է գրեթե բոլոր միջազգային կոնվենցիաներում և պայմանագրերում, ինչպես նաև երկրների ազգային օրենդրությունում:

LEGAL GROUNDS OF THE APPLICATION OF THE RULE ON MINIMAL TERM OF PUNISHMENT FOR CRIME IN THE PROCESS OF EXTRADITION

Ara Fidanyan
The Head of the National Central Bureau of Interpol in the RA

The given article applies to the application of the rule on minimal term of punishment for crime in the process of extradition. An attempt was made in the article to reveal the nature of the rule on minimal term of punishment, its relation to the process of extradition, the approaches of international conventions, agreements and national legislation regarding the given issue, the existence of objectives connected with the application of the rule in the process of extradition, as well as possible solutions and options were recommended for the solution of proposed issues.

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ПРИМЕНЕНИЯ ПРИНЦИПА НАЗНАЧЕНИЯ МИНИМАЛЬНОГО СРОКА НАКАЗАНИЯ В ПРОЦЕССЕ ВЫДАЧИ

Ара Фиданян
Руководитель Центрального бюро Интерпола в РА

Данная статья посвящена принципу назначения минимального срока наказания в процессе выдачи. В статье автором предпринята попытка выявить суть принципа назначения минимального срока наказания, точки соприкосновения с процессом выдачи, подходы международных конвенций, договоров и национальных законодательств по данному вопросу, наличие проблем использования рассматриваемого принципа в процессе выдачи, а также предложены возможные решения и варианты по их решению.

Բանալի բառեր – պատժի նվազագույն ժամկետի կանոն, արտահանձնում (էքստրադիցիա), էքստրադիցիոն հանցագործություն, քրեական օրենսգիրք, դատապարտյալների փոխանցում:
Key words: rule on minimal term of punishment, extradition, crime, criminal code, transmission/extradition of convicted persons.
Ключевые слова: принцип назначения минимального срока наказания, выдача (экстрадиция), преступление, уголовный кодекс, передача осужденных.